



**Կանանց նկատմամբ
խտրականության բոլոր ձևերի
վերացման մասին կոնվենցիա**

Distr: General
2 February 2009
Russian*
Original: English

**Կանանց նկատմամբ խտրականության
վերացման կոմիտե**
Քառասուներեքերորդ նստաշրջան
2009 թվականի հունվարի 19 - փետրվարի 6

**Կանանց նկատմամբ խտրականության վերացման
կոմիտեի եզրափակիչ դիտողություններ**

Հայաստան

1. Կոմիտեն 2009 թվականի հունվարի 23-ին իր 871-րդ և 872-րդ նիստերում քննարկեց Հայաստանի երրորդ և չորրորդ միացյալ պարբերական զեկույցները (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, CEDAW/C /ARM): Կոմիտեի թեմաների և հարցերի ցանկը զետեղված է CEDAW/C/ARM/Q/4 փաստաթղթում, իսկ Հայաստանի կառավարության պատասխանները՝ CEDAW/C/ARM/Q/4/Add.1 փաստաթղթում:

Նախաբան

2. Կոմիտեն երախտագիտություն է հայտնում մասնակից պետությանը երրորդ և չորրորդ միացյալ պարբերական զեկույցները ներկայացնելու համար:

3. Կոմիտեն երախտագիտություն է հայտնում մասնակից պետությանը կոմիտեի նախանստաշրջանային աշխատանքային խմբի պատրաստած ցանկում ընդգրկված թեմաներին և հարցերին գրավոր պատասխաններ ներկայացնելու, ինչպես նաև կոմիտեի բանավոր առաջադրած հարցերին ի պատասխան բանավոր ելույթի և լրացուցիչ մեկնաբանությունների համար:

4. Կոմիտեն գոհունակություն է հայտնում այն կապակցությամբ, որ մասնակից պետությունը պատվիրակություն է ուղարկել՝ արտաքին գործերի փոխնախարարի գլխավորությամբ և տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչների կազմով:

* Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից: Իրականացրել է Համալսարանական կրթության կանանց ասոցիացիան:

Դրական կողմերը

5. Կոմիտեն գոհունակությամբ է նշում, որ մասնակից պետությունը 2006 թվականի մայիսին միացել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը:

6. Կոմիտեն գոհունակություն է հայտնում այն փաստի կապակցությամբ, որ մասնակից պետությունը 2005 թվականին Սահմանադրության մեջ փոփոխություններ է կատարել, մասնավորապես՝ ընդունել է 14.1-րդ հոդվածը, որը օրենքի առջև հավասարություն է երաշխավորում բոլորի համար:

7. Կոմիտեն ողջունում է այն փաստը, որ 2004 թվականին ստեղծվել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսման) պաշտոնը և ընդունվել են մի շարք պետական նախագծեր ու ծրագրեր, մասնավորապես՝ 2007 թվականին «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը»:

Հիմնական խնդրահարույց ոլորտները և հանձնարարականները

8. Նշելով մասնակից պետության՝ կոնվենցիայի բոլոր դրույթների կանոնավոր ու հետևողական իրականացման պարտավորությունը՝ կոմիտեն շեշտում է, որ սույն Եզրափակիչ դիտողություններում ամփոփված խնդրահարույց ոլորտներն ու հանձնարարականները մինչև հաջորդ պարբերական զեկույցը ներկայացնելու ժամանակաշրջանում առաջնահերթ ուշադրություն են պահանջում մասնակից պետության կողմից: Ըստ այդմ՝ կոմիտեն մասնակից պետությանը կոչ է անում համապատասխան գործունեություն ծավալելիս ուշադրություն դարձնել այդ ոլորտների վրա և իր հաջորդ պարբերական զեկույցում հայտնել ձեռնարկված միջոցների ու ձեռք բերված արդյունքների մասին: Կոմիտեն նաև կոչ է անում մասնակից պետությանը սույն Եզրափակիչ դիտողությունների համակողմանի իրականացումն ապահովելու նպատակով դրանք, ի գիտություն, ներկայացնել բոլոր համապատասխան նախարարություններին և Ազգային ժողովին:

Խորհրդարանը

9. Կոմիտեն հաստատելով, որ կառավարությունն է կրում հիմնական պատասխանատվությունը մասնակից պետության՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների համակողմանի կատարման համար, ընդգծում է, որ կոնվենցիան պարտադիր ուժ ունի կառավարության բոլոր ճյուղերի համար, և մասնակից պետությանն առաջարկում է խորհրդարանին առաջարկել, ըստ նրա ընթացակարգերի, երբ դա հնարավոր է, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սույն Եզրափակիչ դիտողություններն իրականացնելու և կոնվենցիայի համաձայն կառավարության հաջորդ զեկույցը պատրաստելու համար:

Կոնվենցիայի և դրա կամընտիր արձանագրության քարոզչությունը

10. Կոմիտեն գոհունակությամբ է նշում, որ մասնակից պետությունն ապահովել է կոնվենցիայի կամընտիր արձանագրության մասին տեղեկատվություն բո-

վանդակող գրքույկների տարածումը, սակայն հայտնում է, որ նախկինի պես մտահոգված է այն իրողությամբ, որ կոնվենցիայի դրույթները, առանձին հաղորդումների ու հետաքննությունների վերաբերյալ կարծիքները բավարար արձագանք չեն գտել իշխանության բոլոր ճյուղերում, այդ թվում և իրավապահ մարմինների աշխատակիցների և հենց իրենց՝ կանանց շրջանում: Կոմիտեն մտահոգված է նաև կոնվենցիայի կիրարկման նախադեպային իրավունքի բացակայությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ տեղեկատվություն չի ստացել սեռի հատկանիշով խտրականության վերացման և գենդերային խտրականության հետ կապված որևէ դատաքննության մասին:

11. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը նպաստել գիտելիքների տարածմանը և կոնվենցիայի, դրա կամընտիր արձանագրության ու գենդերային հավասարության հարցերի ըմբռնման խորացմանը կոնվենցիային և դրա կամընտիր արձանագրությանը, ինչպես նաև կոմիտեի Ընդհանուր հանձնարարականներին և առանձին հաղորդումների ու հետաքննությունների վերաբերյալ կարծիքներին նվիրված ուսումնական ծրագրերի միջոցով, մասնավորապես այնպիսի ծրագրերի, որոնք նախատեսվում են դատական իշխանության ներկայացուցիչների, իրավաբանների, ոստիկանության և ուրիշ իրավապահ մարմինների աշխատակիցների համար, ներառյալ՝ կառավարության պաշտոնատար անձինք և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Կոմիտեն հանձնարարում է նաև տեղեկատվական-ճանաչողական աշխատանքի արշավներ մշակել ու անցկացնել կանանց շրջանում կոնվենցիայով ամրագրված իրենց իրավունքների, ինչպես նաև կամընտիր արձանագրությամբ նախատեսված հաղորդումների ու հետաքննությունների ընթացակարգերի մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով, ինչը նրանց առավել լայն հնարավորություններ կընձեռի իրենց իրավունքները պաշտպանելու հարցում:

Կոնվենցիայի իրավական կարգավիճակը, հավասարության սահմանումը, խտրական օրենքները

12. Նշելով, որ համաձայն մասնակից պետության Սահմանադրության 6-րդ հոդվածի, մասնակից պետության կողմից ընդունված միջազգային իրավական համաձայնագրերը նրա ազգային իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, կոմիտեն ավստոսանք է հայտնում մասնակից պետության օրենսդրության մեջ, համաձայն կոնվենցիայի 1-ին հոդվածի, կանանց նկատմամբ խտրականության հստակ և համակողմանի սահմանման բացակայության համար: Կոմիտեն մտահոգված է նաև, որ կնոջ և տղամարդու հավասարության սկզբունքը, համաձայն կոնվենցիայի 2(a) հոդվածի, հստակ ամրագրված չէ մասնակից պետության օրենսդրության մեջ: Կոմիտեն մտահոգություն է հայտնում կանանց նկատմամբ խտրականության արգելումը նախատեսող հստակ ու համընդգրկուն իրավական դրույթների բացակայության համար, ինչպես նաև այն կապակցությամբ, որ մասնակից պետությունը քաղաքականության մեջ և ծրագրերում նախապատվությունը տալիս է սեռի տեսանկյունից չեզոք ձևակերպումներին, ինչը կարող է կանանց պատշաճ պաշտպանություն չապահովել ուղղակի և անուղղակի խտրականությունից, խոչընդոտել կնոջ և տղամարդու ֆորմալ և փաստացի հավասարության ձեռքբերումը, ինչպես նաև հանգեցնել անհետևողական մոտեցման կանանց մարդու իրավունքների ճանաչման և դրանց հետևելու ոլորտում:

13. Կոմիտեն վճռականորեն հորդորում է մասնակից պետությանը ընդունել համապատասխան ազգային օրենսդրություն, որը կնախատեսի կանանց նկատ-

մամբ խտրականության արգելք՝ համաձայն կոնվենցիայի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի (b) ենթակետի, և կընդգրկի թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի խտրականությունը: Նա կոչ է անում մասնակից պետությանն արագացնել գենդերային իրավահավասարության մասին օրենքի ընդունման ընթացակարգը և կանանց ու տղամարդկանց հավասարության սկզբունքն ամրագրել գենդերային հավասարության մասին օրենքի նախագծում՝ համաձայն 2-րդ հոդվածի (ա) կետի: Կոմիտեն նաև կոչ է անում մասնակից պետությանը ապահովել անուղղակի խտրականության բնույթի և փաստացի հավասարության հայեցակարգի վերաբերյալ տեղեկատվական-բացատրական աշխատանքը կառավարության պաշտոնյաների, դատական իշխանության և հասարակայնության ներկայացուցիչների շրջանում: Բացի այդ, կոմիտեն հանձնարարում է մասնակից պետությանն իր քաղաքականության ու ծրագրերի մշակման ոլորտում գենդերային ձևակերպումների տեսանկյունից որոշակի մոտեցում որդեգրել:

14. Կոմիտեն վերստին ուշադրություն է դարձնում այն մտավախության վրա, որ արտահայտել է իր նախորդ Եզրափակիչ դիտողություններում (A/57/38) և Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեի Եզրափակիչ դիտողություններում (CRC/C/15Add.225) և վերաբերում է այն իրողությանը, որ օրենքով ամուսնության համար տարբեր նվազագույն տարիքներ են սահմանված՝ 18 տարի տղամարդկանց և 17 տարի կանանց համար. դա խտրականություն է կանանց նկատմամբ:

15. Կոմիտեն հետևողականորեն հորդորում է մասնակից պետությանն ապահովել, որ կնոջ համար ամուսնության նվազագույն տարիքը բարձրացվի մինչև 18-ը, ինչպես նաև, ըստ կոնվենցիայի 16-րդ հոդվածի և կոմիտեի թիվ 21 Ընդհանուր հանձնարարականի, վերացվի որևէ բացառություն՝ կապված այդ նվազագույն տարիքի հետ:

Ժամանակավոր հատուկ միջոցներ

16. Ողջունելով ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնք նախատեսում են 15%-անոց քվոտա կանանց համար (առնվազն 10%-անոց քվոտա կին թեկնածուների համար), կոմիտեն մտահոգված է այն իրողությամբ, որ նման քվոտան արդյունավետ չէ: Կոմիտեն մտահոգված է նաև, որ մասնակից պետությունը, որպես ընդհանուր քաղաքականություն, որևէ այլ հատուկ ժամանակավոր միջոց չի ձեռնարկել կոնվենցիայում արժարժված բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության ձեռքբերումն արագացնելու կամ կանանց իրավունքների ոլորտում իրավիճակի բարելավման համար, մասնավորապես աշխատող կանանց համար և կանանց քաղաքական մասնակցության ոլորտում: Կոմիտեն մտահոգված է նաև, որ ըստ երևույթին՝ ժամանակավոր հատուկ միջոցների հայեցակարգի ըմբռնում չկա, որը մեկնաբանվում է կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին պարբերությունում և կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականում:

17. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը, ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության և կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականի, հատուկ օրենսդրություն ընդունել հատուկ ժամանակավոր միջոցներ իրականացնելու մասին՝ բոլոր ոլորտներում տղամարդկանց և կանանց փաստացի հավասարության ձեռքբերումն արագացնելու նպատակով: Կոմիտեն այնուհետև կոչ է անում մասնակից պետությանն արագացնել ընտրական օրենսգրքի փոփոխության գործընթացը՝ 15%-ի քվոտան բարձրացնելու և այն առաջարկվող ավելի քան 20%-ի մակարդակի հասցնելու հնարավորության քննարկման նպատակով:

Կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմ

18. Ողջունելով 2002 թվականին կանանց, ընտանիքի և երեխաների հարցերի վարչության ստեղծումը (աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում)՝ կոմիտեն ափսոսանքով է նշում մասնակից պետության մեջ կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմի պատշաճ կառույցի բացակայությունը: Կոմիտեն այնուհետև նտահոգված է այն հանգամանքով, որ այդ մեխանիզմը պատշաճ կարգավիճակ և քաղաքական ճանաչում չի ստացել և, մասնավորապես, բավարար հնարավորություններ չունի գենդերային հավասարության ապահովման ազգային ծրագրերի ու քաղաքականության արդյունավետ խրախուսման, համադասման, մշտադիտարկման և գնահատման համար: Բացի այդ, կոմիտեն անհանգստությամբ է նշում, որ մարդու իրավունքների ազգային պաշտպանի (օմբուդսման) գրասենյակում հատուկ ստորաբաժանում չկա, որը կզբաղվեր գենդերային հավասարության հարցերով:

19. Իր նախորդ հանձնարարականների համաձայն (A/57/38)՝ կոմիտեն հիշեցնում է մասնակից պետությանն իր պարտավորության մասին, այն է՝ ապահովել կառավարության համակողմանի հաշվետվողականությունը գենդերային հավասարության և կոնվենցիայի իրականացման գործընթացում կանանց կողմից իրենց մարդու իրավունքներից օգտվելու հարցերում: Այդ կապակցությամբ կոմիտեն հիշեցնում է իր թիվ 6 Ընդհանուր հանձնարարականի և Պեկինի գործողությունների ծրագրի բովանդակած մեկնաբանությունները, որոնք վերաբերում են կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմին, և հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանն օրենք ընդունել գենդերային հավասարության մասին, որը կնախատեսեր կանանց դրության բարելավման ազգային մեխանիզմ՝ կոնվենցիայի և Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի իրականացման գործունեության համադասման, ինչպես նաև պետական քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային ռազմավարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և կադրային ռեսուրսներով, այդ թվում Սահմանադրական դատարանում բոլոր նոր օրենքների քննարկման գործընթացում և բյուջետային գործընթացի շրջանակներում: Կոմիտեն կոչ է անում նաև մասնակից պետությանը մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսման) գրասենյակում ստեղծել հատուկ պաշտոն գենդերային հավասարության ապահովման հարցերի գծով:

Կարծրատիպեր, մշակութային քաղաքականություն

20. Կոմիտեն վերստին հայտարարում է, որ անհանգստացած է կանանց ենթակա դերի խորապես արմատացած հայրիշխանական հայացքների և ընտանիքում ու հասարակության մեջ նրանց դերի ու պարտականությունների վերաբերյալ կայուն կարծրատիպերի կապակցությամբ, որոնց մասին խոսվել է իր նախորդ Եզրափակիչ դիտողություններում (A/57/38): Այդ մոտեցումները և կարծրատիպերը էական խոչընդոտ են կոնվենցիայի իրականացման ճանապարհին և քաղաքական կյանքում, աշխատանքի շուկայում, կրթության ոլորտում ու այլ բնագավառներում կանանց անբարենպաստ վիճակի պատճառներից մեկն են:

21. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն անհապաղ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես գյուղական վայրերում, այն ամենի վերափոխումը խթանելու համար, ինչն առնչվում է լայնորեն տարածում գտած կանանց ենթակա դերին և

երկու սեռերի դերերի կարծրատիպային պատկերացումներին: Նման միջոցները պետք է նախատեսեն տեղեկատվական-բացատրական և կրթական արշավներ՝ ուղղված, մասնավորապես, համայնքների ղեկավարներին, ծնողներին, ուսուցիչներին, պաշտոնատար անձանց, տղաներին ու աղջիկներին, ինչպես որ նախատեսված է կոնվենցիայի 2-րդ հոդվածի (f) պարբերության և 5-րդ հոդվածի (a) պարբերության դրույթներով ամրագրված պարտավորություններում: Կոմիտեն հանձնարարում է նաև մասնակից պետությանը քննարկել զանգվածային լրատվության դերի հարցը նման կարծրատիպերի վերացման գործում, մասնավորապես՝ կանանց ոչ տիպական և դրական կերպարի ներկայացման խրախուսման և առհասարակ հասարակության համար գենդերային հավասարության նշանակության մասին տեղեկատվության տարածման միջոցով:

Բռնություն կանանց նկատմամբ

22. Կոմիտեն կրկին հայտնում է, որ անհանգստացած է այն փաստի ըմբռնման ու ճանաչման բացակայությամբ, որ գենդերային բռնությունը կանանց նկատմամբ և, մասնավորապես, կենցաղային բռնությունը նախկինի պես մասնակից պետությունում գոյություն ունեցող լուրջ հիմնախնդիրներից մեկն է, ինչի մասին խոսվել է կոմիտեի նախորդ Եզրափակիչ դիտողություններում (A/57/38): Կոմիտեն նաև աստուսանք է հայտնում այն կապակցությամբ, որ մասնակից պետության զեկույցում ոչինչ չի ասվում այդ երևույթի մասին: Կոմիտեն անհանգստացած է նաև կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի մասին որոշակի օրենքի բացակայությամբ, այն հանգամանքով, որ քրեական օրենսգրքում կենցաղային բռնությունը չի որակվում որպես ինքնուրույն հանցակազմ, և չկան համապատասխան պատժամիջոցներ: Բացի այդ, կոմիտեն մտահոգված է կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի միջոցների ձեռնարկման հատուկ պետական մարմնի կամ համադասող գերատեսչության բացակայությամբ: Նշելով, որ 2002 թ. Կանանց իրավունքների կենտրոնը ոստիկանության հետ համատեղ ստեղծել է համապատասխան ապաստարան, կոմիտեն անհանգստություն է հայտնում բռնության զոհերի համար անհրաժեշտ ապաստարանների բացակայության առնչությամբ: Բացի այդ, կոմիտեն մտահոգություն է հայտնում կենցաղային բռնության գործերով դատաքննությունների վերաբերյալ տվյալների բացակայության կապակցությամբ, ինչպես նաև այն իրողության առնչությամբ, որ անհասկանալիորեն կանանց նկատմամբ գենդերային կամ այլ ձևերի բռնությանը վերաբերող քիչ քանակությամբ գործեր են դատարան ուղարկվել: Կոմիտեն մտահոգված է նաև կանանց նկատմամբ տարբեր ձևերի բռնության դեպքերի վերաբերյալ բավարար վիճակագրական տվյալների բացակայությամբ, այդ թվում և այն կանանց, ովքեր սպանվել են ամուսնու, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ ձեռքով կամ կենցաղային բռնության հետևանքով, ինչպես նաև զոհերի աջակցության ծառայությունների առկայության վերաբերյալ:

23. Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանը առաջնահերթ ուշադրություն դարձնել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացմանը, մասնավորապես՝ կենցաղային բռնության, և համակողմանի միջոցներ ձեռնարկել այդ խնդրի լուծման համար՝ համաձայն թիվ 19 Ընդհանուր հանձնարարականի: Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանը անհապաղ հատուկ օրենք ընդունել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի մասին: Նման օրենքը պետք է նախատեսի, որ կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը քրեական հանցագործություն և քաղաքացիական իրավախախտում է. մեղավորները պետք է դատական հետապնդման ու պատժի ենթակվեն, և զոհ դարձած կանանց ու աղ-

ջիկների համար պետք է մատչելի լինեն իրավական ու այլ կարգի պաշտպանության արդյունավետ միջոցները, այդ թվում և պաշտպանության մասին հրաման ստանալու հնարավորությունը, և պետք է բոլոր շրջաններում բավարար թվով պատշաճ ապաստարաններ մատչելի լինեն, մասնավորապես՝ պետք է հաշվի առնվեն գյուղի, հաշմանդամ, փախստական և փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց պահանջները: Այնուհետև կոմիտեն հանձնարարում է դատական իշխանության ներկայացուցիչների և պետական պաշտոնատար անձանց ուսուցում կազմակերպել, մասնավորապես՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և բուժաշխատողների համար, որպեսզի ծանոթանան կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին, հատկապես կենցաղային բռնության հետ կապված հիմնախնդիրներին և կարողանան համապատասխան աջակցություն ապահովել զոհերի համար: Կոմիտեն հանձնարարում է նաև հավելյալ քարոզարշավներ կազմակերպել հասարակությանը իրազեկելու համար և անհանդուրժողականության քարոզարշավներ՝ կանանց նկատմամբ բռնության կապակցությամբ:

Մարդկանց առևտուր և մարմնավաճառության շահագործում

24. Ողջունելով այն միջոցները, որոնք ձեռնարկել է մասնակից պետությունը մարդկանց առևտրի դեմ պայքարելու համար, այդ թվում՝ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելով, որոնք պատասխանատվություն են սահմանում թե՛ աշխատանքային, թե՛ սեռական շահագործման նպատակով մարդկանց առևտրի համար, և ողջունելով մարդկանց առևտրի դեմ պայքարի 2007-2009 թթ. գործողությունների ծրագիրը՝ կոմիտեն մտահոգություն է հայտնում այդ երևույթի մասշտաբների մեծացման և այն հանգամանքի կապակցությամբ, որ բավարար միջոցներ չեն ձեռնարկվում առևտրի հիմնական պատճառների վերացման ուղղությամբ, ինչպիսիք են տնտեսական ծանր դրությունը և գենդերային կարծրատիպերի ու գենդերային անհավասարության տարածվածությունը: Կոմիտեն մտահոգված է նաև այն կանանց պաշտպանության բացակայությամբ, ովքեր կարող են առևտրի զոհ դառնալ, զոհերի սահմանափակ աջակցությամբ և ապաստարանների բացակայությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ այդ կանանց վրա դրված խարանը կխոչընդոտի նրանց վերասոցիալականացումը: Կոմիտեն ավստսանք է հայտնում սեռական շահագործման նպատակով կանանց և դեռահասների առևտրի վերաբերյալ տվյալների սահմանափակ ծավալի կապակցությամբ, ինչպես նաև հատուկ ավստսանք այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության բացակայության առնչությամբ:

25. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն արդյունավետորեն իրականացնել 2007-2009 թթ. ժամանակաշրջանում մարդկանց առևտրի դեմ պայքարի ազգային ծրագիրը, արդյունավետորեն ապահովել քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի իրականացումը և մարդկանց առևտրի հիմնական պատճառների վերացման միջոցներ ձեռնարկել՝ այդ երևույթի մասշտաբների հետագա կրճատման նպատակով: Կոմիտեն հանձնարարում է մասնակից պետությանը մեծացնել գենդերային բռնության, ինչպես նաև մարդկանց առևտրի զոհերի համար ապաստարանների ֆինանսավորումը, որը սկսվել է 2009 թ., և կատարել բոլոր անհրաժեշտ քայլերը մարդկանց առևտրի զոհերի վերականգնման և վերասոցիալականացման ապահովման համար:

26. Ինչպես իր նախորդ եզրափակիչ դիտողություններում (A/57/38), կոմիտեն ավստսանք է հայտնում մարմնավաճառության մասշտաբների, այդ թվում և՛ մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդող սոցիալ-տնտեսական գործոնների

վերացման ջանքերի և այդ ոլորտը լքել ցանկացող կանանց աջակցության միջոցների վերաբերյալ տվյալների սահմանափակ ծավալի կապակցությամբ: Կոմիտեն անհանգստությամբ է նշում նաև, որ մարմնավաճառությամբ զբաղվող կանայք վարչական պատասխանատվության են ենթարկվում նրանց վրա դրվող տուգանքի ձևով, ինչը նրանց կրկնակի զոհ է դարձնում, ընդ որում՝ նրանց հաճախորդների նկատմամբ որևէ պատժամիջոց չի կիրառվում:

27. Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանն իր հաջորդ պարբերական զեկույցում մարմնավաճառության շահագործման մասին տվյալներ և տեղեկատվություն ներկայացնել՝ սեռերի տարաբաժանմամբ: Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանը վերացնել մարմնավաճառությամբ զբաղվող կանանց նկատմամբ վարչական պատասխանատվությունը և զբաղվել մարմնավաճառության պահանջարկի հիմնախնդրով:

Մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

28. Կոմիտեն նախկինի պես մտահոգված է քաղաքական և հասարակական կյանքին կանանց մասնակցության ցածր մակարդակով, հատկապես ղեկավար մարմիններում նրանց ներկայացվածությամբ, ներառյալ Ազգային ժողովը, կառավարությունը, դիվանագիտական ծառայությունը, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները և բարձրագույն դատական պաշտոնները: Կոմիտեն նմանապես մտահոգությամբ է նշում կին լրագրողների նկատմամբ բռնության դեպքերի մասին, մասնավորապես այն կանանց, ովքեր ակտիվություն են ցուցաբերում ընտրարշավների ընթացքում, հատկապես այն պատճառով, որ նման բռնությունը խոչընդոտում է հասարակական կյանքին կանանց ակտիվ մասնակցությունը:

29. Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանն ազգային տեղեկատվական-քարոզչական արշավներ կազմակերպել քաղաքական և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորությունը ցույց տալու նպատակով, հատկապես գյուղական վայրերում: Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանը բարձրացնելու կանանց ներկայացվածությունը քաղաքական և հասարակական կյանքում, այդ թվում և՛ միջազգային մակարդակով: Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը, համաձայն կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի և կոմիտեի թիվ 25 և 23 Ընդհանուր հանձնարարականների, անցկացնել ժամանակավոր միջոցների կիրառման դիտարկում: Նման միջոցների կիրառումը կանանց քաղաքական ներկայացվածության ընդլայնման նպատակով պետք է ժամկետների և քվոտաների մեծացման հետ մեկտեղ ընդգրկի նպատակային ցուցանիշները: Կոմիտեն խնդրում է նաև մասնակից պետությանը ապահովել կանանց անվտանգությունը քաղաքական կյանքում և աջակցել նրանց մասնակցությանը պետական գործերում:

Կրթություն

30. Նշելով, որ տարրական և միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, կոմիտեն անհանգստություն է հայտնում այն կապակցությամբ, որ մի շարք գործոնների պատճառով, ներառյալ աղքատության նշանակալի մակարդակը և կանանց դերի ու պարտականությունների վերաբերյալ սոցիալական կարծատիպերի առկայությունը, նկատվում է համեմատաբար խիստ մաղում հատկապես գյուղի, ազգային փոքրամասնությունների

ներկայացուցիչ աղջիկների շրջանում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կանանց ոչ բավարար ներկայացվածությունն ղոկտորանտուրայի մակարդակով սովորողների շրջանում: Կոմիտեն մտահոգված է նաև նրանով, որ կանայք նախկինի պես կենտրոնացած են ավանդաբար կանանց առարկաների ուսումնասիրության ոլորտում: Կոմիտեն անհանգստություն է հայտնում այնուհետև գիտական հաստատություններում կանանց փոքր թվի կապակցությամբ, օրինակ՝ պրոֆեսորների, ավագ դասախոսների ու հետազոտողների շրջանում և կրթության համակարգի ղեկավար պաշտոններում:

31. Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանը վերացնելու այն խոչընդոտները, որոնք խանգարում են աղջիկներին շարունակել կրթությունը: Կոմիտեն խորհուրդ է տալիս սեմինարներ և քարոզչական միջոցառումներ կազմակերպել, որպեսզի օգնություն ցույց տրվի ծնողներին աղջիկների համար կրթության կարևոր դերը գիտակցելու հարցում, և հատուկ միջոցներ ձեռնարկել, որպեսզի ուսումը թողած աղջիկներն ու կանայք կրթության համակարգ վերադառնալու հնարավորություն ունենան իրենց տարիքին համապատասխան պայմաններում: Կոմիտեն խնդրում է նաև մասնակից պետությանը շարունակել բոլոր դպրոցական դասագրքերի դիտարկումը գենդերային կարծրատիպերի վերացման և այն ծրագրերի իրականացման նպատակով, որոնք նպաստում են աղջիկների՝ ոչ ավանդական ուսումնական դասընթացների ընտրությանը: Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանը ընդունելու ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան մեծացնելու կանանց թիվը ղոկտորանտուրայում, ակադեմիական հաստատությունների բարձր մակարդակներում, կրթության համակարգի բոլոր բարձր պաշտոններում:

Ջբաղվածություն

32. Ողջունելով աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները, որոնք մասնավորապես սահմանում են հավասար իրավունքներ բոլոր կողմերի համար՝ անկախ սեռից, արգելում են հարկադիր աշխատանքը և մինչև 14 տարեկան երեխաներին աշխատանքի ընդունելը, կոմիտեն լուրջ մտահոգություն է հայտնում աշխատանքի շուկայում շարունակվող ուղղահայաց ու հորիզոնական խտրազատման և գենդերային հավասարությանը միտված գենդերային բնույթի որոշակի օրենսդրական միջոցների բացակայության կապակցությամբ: Կոմիտեն նշում է կանանց շրջանում գործազրկության բարձր մակարդակն ու կանանց կենտրոնացումը մասնավոր զբաղվածության հատվածներում և ցածր վարձատրվող հատվածներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, գյուղատնտեսությունը և ոչ ֆորմալ հատվածը: Կոմիտեն հատկապես մտահոգություն է հայտնում աշխատավարձի տարբերության պահպանման և աշխատավարձի տարբերության հայեցակարգի ընկալման բացակայության կապակցությամբ, ինչպես նաև մասնավոր ընկերությունների բարձրագույն ղեկավար պաշտոններում ու վարչություններում կանանց ցածր ներկայացվածության, ի լրումն՝ աշխատավարձում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունները կանխարգելող արդյունավետ համակարգված միջոցների բացակայության կապակցությամբ:

33. Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանն ընդունելու զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացման արագացմանն ուղղված ռազմավարություններ ու որոշակի օրենսդրական միջոցներ և ձգտել աշխատանքի շուկայի բոլոր մակարդակներում կանանց համար հնա-

րավորությունների փաստացի հավասարության ապահովմանը, ներառյալ՝ աշխատանքի վայրում կանանց նկատմամբ սեռական ոտնձգության դեմ պայքարի արդյունավետ միջոցները: Կոմիտեն այնուհետև հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանը կանանց և տղամարդկանց աշխատավարձերի առկա տարբերությունը վերացնելու և հավասար աշխատավարձի (հավասար աշխատավարձ հավասար աշխատանքի դիմաց՝ ըստ կոմիտեի թիվ 13 Ընդհանուր հանձնարարականի և ԱՄԿ-ի Հավասար աշխատավարձի մասին կոնվենցիայի (թիվ100)) ապահովման նպատակով կազմակերպել պաշտոնների գնահատման համակարգերի մշակումը՝ հաշվի առնելով գենդերային չափանիշները: Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը շարունակել պետական հատվածի այն ճյուղերում աշխատավարձի բարձրացման ջանքերը, որտեղ առավելապես կանայք են աշխատում: Կոմիտեն հանձնարարում է նաև մասնակից պետությանը, համաձայն կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության և կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականի, ավելի լայնորեն կիրառել ժամանակավոր հատուկ միջոցները՝ քանակական նպատակային ցուցանիշներ սահմանելով, նշելով ժամկետները կամ կանանց համար արտադրատեխնիկական ուսուցման մատչելիության և մասնակցության քվոտաները, ներառյալ աշխատանքի ոչ ավանդական տեսակները, և պետական հատվածի ավելի բարձր պաշտոններում կանանց առաջ մղելով:

Կանանց առողջապահությունը

34. Նշելով առողջապահության անվճար մատչելիությունը և այլևայլ ջանքերը՝ գործադրված կանանց վերարտադրողական առողջության ապահովման բարելավման համար, կոմիտեն ափսոսանք է հայտնում այն կապակցությամբ, որ այդ ծրագրերն ու ռազմավարությունները անարդյունավետ են եղել: Կոմիտեն նախկինի պես մտահոգված է առողջապահության ոլորտում համապատասխան ընդհանուր ծառայությունների, ինչպես նաև կանանց վերարտադրողական առողջության ոլորտի ծառայությունների ոչ բավարար մատչելիությամբ, հատկապես գյուղական և հեռավոր շրջաններում ապրողների համար, ինչպես նաև այն հանգամանքով, որ աբորտների թիվը փաստորեն մեծացել է, ինչը վկայում է, որ մասնակից պետության մեջ աբորտները նախկինի պես ընտանիքի պլանավորման ամենատարածված ձևերից մեկն են: Կոմիտեն մտահոգված է նաև պատանիների շրջանում հղիության բարձր ցուցանիշներով և ափսոսանք է հայտնում քրեական աբորտների հետևանքով մահվան դեպքերի թվաքանակի տվյալների բացակայության կապակցությամբ:

35. Կոմիտեն հանձնարարում է մասնակից պետությանը շարունակել միջոցների ձեռնարկումը կանանց համար ընդհանուր առողջապահության և, մասնավորապես, վերարտադրողական ոլորտի ծառայությունների մատչելիության բարելավման համար: Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը ակտիվացնել սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ոլորտի ծառայությունների ընդլայնման ջանքերը, ներառյալ ընտանիքի պլանավորումը, ռեսուրսների համախմբումը այդ նպատակով և կանանց համար այդ ծառայությունների փաստացի մատչելիության դիտարկումը: Կոմիտեն այնուհետև հանձնարարում է ապահովել ընտանիքի պլանավորման և վերարտադրողական առողջության հարցերի վերաբերյալ գիտելիքների լայնորեն տարածումը՝ նախատեսված աղջիկների և տղաների համար և հատուկ ուշադրություն դարձնելով դեռահասների շրջանում վաղ հղիությունների կանխմանը, ներառյալ սեռավարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարը:

Կանանց խոցելի խմբերը

36. Կոմիտեն նշում է տեղեկատվության և վիճակագրական տվյալների բացակայությունը կանանց խոցելի խմբերի մասին, հատկապես գյուղի կանանց, միայնակ մայրերի, հաշմանդամ մայրերի, փախստական կանանց, ազգային կամ կրոնական փոքրամասնություններին պատկանող կանանց մասին, որոնք հաճախ են տառապում խտրականության բազմաթիվ ձևերից, հատկապես աշխատանքի շուկայի, առողջապահության, կրթության և սոցիալական արտոնությունների մատչելիության առումով: Կոմիտեն նաև մտահոգությամբ է նշում մասնակից պետության կողմից ենթադրաբար գենդերայնորեն չեզոք ծրագրերի պահպանումը այնպիսի ոլորտներում, ինչպիսին է աշխատանքը փախստականների կամ հաշմանդամների հետ, որոնք, ըստ էության, չեն բավարարում հաշմանդամ և փախստական կանանց առանձնահատուկ պահանջները:

37. Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանն իր հաջորդ զեկույցում ներկայացնել կոնվենցիայի ընդգրկած բոլոր ոլորտներում կանանց խոցելի խմբերի փաստացի վիճակի համընդգրկուն պատկերը, ինչպես նաև տեղեկատվություն որոշակի ծրագրերի և ձեռքբերումների մասին: Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն ընդունել ռազմավարություններ և ծրագրեր՝ հաշվի առնելով գենդերային առանձնահատկությունները, որոնք պետք է ուղղված լինեն կանանց խոցելի խմբերի առանձնահատուկ պահանջներին բավարարմանը:

Հաջորդ զեկույցի պատրաստումը

38. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը ոչ կառավարական կազմակերպությունների կանոնավոր խորհրդատվությունների մշտական գործընթաց և համագործակցություն հաստատել այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են կոնվենցիայի իրականացմանը: Կոմիտեն հանձնարարում է նաև մշտական և կանոնավոր հիմունքներով խորհրդատվություն կազմակերպել կանանց ոչ կառավարական կազմակերպությունների լայն շրջանակների հետ բոլոր այն հարցերով, որոնք վերաբերում են գենդերային հավասարության խրախուսմանը, ներառյալ կոմիտեի Եզրափակիչ մեկնաբանություններին ուղղված միջոցների ձեռնարկումը և ապագա զեկույցների պատրաստումը:

Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը

39. Կոմիտեն հետևողականորեն կոչ է անում մասնակից պետությանը կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կատարելիս լիովին օգտագործել Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, որոնք ուժեղացնում են կոնվենցիայի դրույթները, և խնդրում է մասնակից պետությանն իր հաջորդ պարբերական զեկույցում տեղեկատվություն ընդգրկել այդ թեմայի վերաբերյալ:

Հազարամյակի զարգացման նպատակները

40. Կոմիտեն ընդգծում է, որ կոնվենցիայի լիակատար արդյունավետ իրականացումը սկզբունքորեն կարևոր է Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու համար: Նա առաջարկում է գենդերային հայեցակետերը և կոնվենցիայի դրույթների անմիջական արտացոլումը ներառել բոլոր ջանքերում՝

ուղղված այդ նպատակների իրականացմանը, և խնդրում է մասնակից պետությանն իր հաջորդ պարբերական զեկույցում ընդգրկել տեղեկատվություն այդ թեմայի վերաբերյալ:

Այլ համաձայնագրերի վավերացումը

41. Կոմիտեն նշում է, որ պետությունների միացումը մարդու իրավունքների ինը հիմնական միջազգային փաստաթղթերին¹ հնարավորություն է տալիս կանանց ընդլայնելու իրենց իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը կյանքի բոլոր ոլորտներում: Ուստի կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը վավերացնել այն պայմանագրերը, որոնց մասնակիցը դեռևս չի հանդիսանում, մասնավորապես Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան, Չաչմանդամների իրավունքների մասին կոնվենցիան և Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիան:

Եզրափակիչ դիտողությունների տարածումը

42. Կոմիտեն խնդրում է ապահովել մասնակից պետությունում սույն Եզրափակիչ դիտողությունների տարածումը, որպեսզի հասարակայնությունը, ներառյալ պետական պաշտոնյաները, քաղաքական գործիչները, խորհրդարանականները և կանանց իրավապաշտպան կազմակերպությունները տեղյակ լինեն այն քայլերի մասին, որոնք արվում են կանանց իրավական և փաստացի հավասարության ապահովման համար, ինչպես նաև հետագա քայլերի մասին, որոնք անհրաժեշտ են այդ կապակցությամբ: Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանը շարունակել հատկապես կանանց իրավապաշտպան կազմակերպությունների շրջանում կոնվենցիայի, դրա կամընտիր արձանագրության, կոմիտեի Ընդհանուր հանձնարարականների, Պեկինի հռչակագրի և գործողությունների ծրագրի և Գլխավոր ասամբլեայի «Կանայք 2000 թվականին. հավասարություն տղամարդկանց և կանանց միջև, զարգացում և խաղաղություն XXI դարում» խորագրով կրող քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի դրույթների լայնորեն տարածումը:

Հաջորդ զեկույցի տարեթիվը

44. Կոմիտեն խնդրում է մասնակից պետությանը ըստ կոնվենցիայի 18-րդ հոդվածի իր հաջորդ ներկայացվելիք պարբերական զեկույցում արձագանքել սույն Եզրափակիչ դիտողություններում արտահայտված մտահոգություններին: Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանն իր հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցները ներկայացնել միացյալ 2013 թվականին:

¹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, Բոլոր միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա, Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա և Չաչմանդամների իրավունքների մասին կոնվենցիա: